ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«05» նոյեմբերի 2018 թվականի N: 247 ք.Գյումրի

ՄՈՒՇԵՂ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ, ԱՐՏԱԿ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ ԵՎ ՍԱՄՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2335-Ն որոշմամբ հաստատված «Գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի հատուցման վճարման կարգի» 3-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետի 2018 թվականի հոկտեմբերի 19-ի զեկուցագրերը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստան Հանրապետության Շիրակի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի պետ Մուշեղ Մուրադյանին, գլխավոր մասնագետներ՝ Արտակ Հայրապետյանին և Սամվել Հարությունյանին գործուղել քաղաք Երևան՝ «Մաստեր Սթայլ» ՍՊԸ ուսումնական կենտրոնում կայանալիք «Ներքին աուդիտորների շարունակական մասնագիտական վերապատրաստման» դասընթացի թեստավորմանը մասնակցելու նպատակով:
2. Գործուղման տևողությունը մեկ օր՝ 2018 թվականի նոյեկմբերի 8-ին:

Կ.ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է